«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

<u>Թեմա՝</u> Միջոցառումների դերը պատմության դասավանդման գործընթացում

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Մկրտչյան
(Բագրավանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ)

Գյումրի 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------էջ 3

Գլուխ 1 Միջոցառումը որպես մեթոդ պատմություն առարկայի յուրացման գործընթացում----------էջ 5

Գլուխ 2 Միջոցառման տեսակները----------էջ 8

Գլուխ 3 Միջոցառումների դերն ու նշանակությունը պատմության դասավանդման գործընթացում ----------էջ13

Եզրակացություն ----------էջ22

Օգտագործված գրականության ցանկ ----------էջ23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչի պահանջների և չափորոշչային վերջնարդյունքների սովորողը պետք է՝

●իմանա և նկարագրի տարբեր ժամանակաշրջանների հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումները, հայոց և համաշխարհային պատմության իրադարձությունների փոխկապակցվածությունը ●կարողանա մասնակցել Հայաստանի հիմնախնդիրների քննարկմանը՝ օգտագործելով պատմության, պետության և տնտեսության մասին ունեցած համապատասխան գիտելիքները

●Ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ

●վերլուծի Հայաստանի Հանրապետության արդի հիմնախնդիրները և մարտահրավերները տեղական, տարածաշրջանային և գլոբալ համատեքստում, արձագանքի դրանց որպես իրազեկ, պատասխանատու և հայրենասեր քաղաքացի[1]:

Ինչպես տեսնում ենք, Հանրակրթության պետական չափորոշիչը հստակ սահմանում է, որ ուսուցման հետագա կատարելագործման հայող լուծումը հնարավոր է միայն կրթության և դաստիարակության ուղիների միացման ճանապարհով: Միայն այն ժամանակ, երբ գիտելիքները կդառնան բարոյական կատարելագործման գործիք այդ դեպքում էլ կնպատակամղվեն մարդու ներդաշնակ զարգացմանը: Դժվար թե գտնվի որևէ ուսուցիչ, որը չհավաստի, որ դպրոցում երեխայի կրթության և դաստիարակության գործում մեծ դեր են

խաղում միջոցառումները, այսինքն արտադասարանական և արտադպրոցական գործունեությունը, որոնք դպրոցի ուսունադաստիարակչական գործունեության կարևորագույն տարրերից մեկն են, իսկ պատմություն առարկայի դեպքում՝ կարևորագույն բաղադրիչը: Միջոցառումները առավել հատկանշական են պատմություն առարկային,քանի որ այս առարկան իր բնույթով առավել է նպաստում նախ անհատ-քաղաքացու ձևավորմանը, և առավել է ձևավորում աշակերտների մոտ այնպիսի արժեքներ ,ինչպիսիք են հայրենասիրությունը,պատմական անցյալի վերլուծությունն ու անցյալից դասեր քղելը: Իսկ այս ամենին նպաստում են հատկապես արտադասարանակաբ և արտադպրոցական ցանկացած միջոցառում: Պատմության դասավանդման ընթացքում արտադասարանային գործունեությունը առաջին հերթին առավել հիմնավոր է դարձնում պատմություն առարկայից ձեռք բերած տեսական գիտելիքները,ավելի հնարավորություն է տալիս առավել քննադատաբար և յուրովի մեկնաբանությամբ վերաբերվել պատմական երևույթների,պատմական կարևորագույն գործիչների դերի գործունեությանը: Միջոցառումները կամ արտադասարանական, արտադպրոցական ցանկացած գործունեություն առավել նպաստում է սովորողների ոչ միայն ճանաչողական,հետազոտական,վերլուծական հմտությունների զարգացմանը,այլև նպաստում է սովորողների ինքնադրսևորմանը,հռետոր խոսքի ձևավորմանն ու արտահայտմանը:Ինչպես տեսնում ենք վերոնշյալ բոլոր հմտություններն ու արժեքները ձևավորվում են հենց պատմության դասաժամին,իսկ պատմության դասավանդումն առավել արդյունավետ է դառնում,երբ այն դուրս է գալիս դասասենյակի շրջանակներից:

ԳԼՈՒԽ 1. Միջոցառումը որպես մեթոդ պատմություն առարկայի յուրացման գործընթացում

Դպրոցում միջոցառում է համարվում ցանկացած արտադասարանական կամ արտադպրոցական գործունեություն, որի նպատակն է հարստացնել և խորացնել սովորողների գիտելիքները որևէ երևույթի նկատմամբ,ինչն էլ կնպաստի սովորողների ճանաչողական ,վերլուծական,հետազոտական հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև արժեհամակարգի,գեղագիտական ճաշակի ձևավորմանը,ինքնադրսևորմանը:

Միջոցառումները նպաստում են հանրակրթության պետական չափորոշչով նախատեսված լեզվական գրագիտության,սովորել սովորելու,ինքնաճանաչողական և սոցիալական,ժողովրդավարական և քաղաքացիական, մշակութային կարողունակությունների ձևավորմանը և զարգացմանը: Եվ քանի որ վերոնշյալ բոլոր կարողունակությունները ձևավորվում են պատմության առարկայի դասավանդման գործընթացում ,ուստի միջոցառումների դերը նույնպես էական են դառնում հատկապես պատմության առարկայի դասավանդման գործընթացում դժվար թե գտնվի պատմության որևէ ուսուցիչ,որը չզբաղվի արտադասարանական այս կամ այն աշխատանքով դասապրոցեսին զուգընթաց այն օգնում է ուսուցչին լուծելու սովորողների աաշխարհայացքի ձևավորմանը ,նրանց հայրենասիրական ոգով դաստիարակելու խնդիրները, նպաստում սովորողների ստեղծագործական

ունակությունների դրսևորմանը ,ընդարձակում հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության մեջ, օգնում գտնելու իր կոչումը: Ի տարբերություն դասի՝ միջոցառումները անց են կացվում առավել ազատ միջավայրում առավել բազմակողմանի մոտեցումներով,առավել տպավորիչ և բովանդակալից միջոցներով, ուսուցումը դարձնում է առավել հետաքրքիր,նպատակային և տպավորիչ: Ցանկացած միջոցառում մեծ ազդեցություն է գործում ինչպես անհատի աշխարհայացքի ձևավորման առարկայի հանդեպ հետաքրքրության զարգացման վրա,այնպես էլ ուսուցման որակի բարձրացման նախապայմանն է : Արդյունքը լինում է այն որ աշակերտների հետ արտադասարանական շփման ընթացքում տեղի է ունենում փոխադարձ միմյանց լսելու,միմյանց հասկանալու,և հետևաբար միմյանց նկատմամբ հարգանք սերմանելու փորձ: Այսինքն միջոցառումները նաև դաստիարակչական մեծ կարևորություն ունեն: Սակայն միջոցառումները պետք է լինեն բավականին նպատակային, բովանդակային,ոչ ստանդարտ,բխեն սովորողների հետաքրքրության շրջանակներից,նախասիրություններից,հակառակ դեպքում միջոցառումը կարող է անիմաստ դառնալ,տալ անցանկալի արդյունք: Միջոցառումը պետք է տարբերվի ավանդական,ամենօրյա դասերից,թե իր բովանդակությամբ,թե իր ընթացքով և թե իր թեմատիկայով : Պետք է նշել,որ դեռևս ոչ բոլոր միջոցառումներն են արդյունավետ և հետաքրքիր,ինչի հետևանքով էլ հաճախ հատկապես միջին և բարձր դասարանի աշակերտները այդքան էլ սիրով չեն մասնակցում արտադասարանական միջոցառումներին: Այստեղ պետք է նշել. որ հատկապես պատմության դասավանդումը արտադասարանական առավել լայն և բազմակողմանի հնարավորություն է ընձեռում: Պատահական չէ, որ ժամանակակից դպրոցում պատմության ուսուցչի ուշադրությունը գնալով ավելի է հրավիրվում պատմության դասընթացի ոչ ավանդական մեթոդներին և արտադասարանական գործունեության ձևին: Պատմության դասավանդման գործընթացում միջոցառումները առաջին հերթին նպաստում են ճանաչողական գիտելիքների ձեռքբերմանը:

Միջոցառումների արդյունքում, օրինակ, առավել բազմակողմանի և

վերլուծական մոտեցում է ցուցաբերվում որևէ գործչի նկատմամբ: Հետազոտական,վերլուծական աշխատանքների շնորհիվ տվյալ գործչին դիտարկում է տարբեր առումներով և մոտեցումներով, ինչն էլ մի կողմից նպաստում է սովորողների վերլուծական , հետազոտական կարողությունների զարգացմանը,իսկ մյուս կողմից հիմնավոր գիտելիքներ ձեռք բերելուն,քանի որ դասը բավական չէ տվյալ գորչին կամ պատմական երևույթին դիտարկել տարբեր կողմերից,տարբեր նկատառումներով:

Միջոցառումներն այս պարագայում սովորողներին հնարավորություն են տալիս ստեղծագործական ,ինքնուրույն գործունեության,հմտությունների ձեռքբերման ,ինչն էլ առավել նպաստում է սովորողների ճանաչողական գիտելիքների ձեռքբերմանը,հայրենասիրական դաստիարակությանը և պատմության մեջ անհատի ձևավորմանն ու նշանակությանը: Արտադպրոցական աշխատանքների մյուս առավելությունը կայանում է նրանում,որ դասի ժամանակ շատ հաճախ ժամանակի սղության պատճառով չենք նպաստում պատմական գիտելիքների ընդլայնմանն ու կայացմանը: Օրինակ դասի ժամանակ սոսկ մշակութային արժեքների ցուցադրությունը այնքան էլ տպավորիչ և ակնառու չէ,ինչպես որ այդ պատմամշակութային արժեքների դիտարկումը կիրականացվի էքսկուրսիաների , արշավների միջոցով: Նման էքսկուրսիաներն ու արշավները կնպաստեն ոչ միայն ճանաչողական կարողությունների,այլև գործնական և հաղորդակցական հմտությունների զարգացմանը,պատմամշակութային ժառանգության նկատմամբ անձնական ներգրավվածության և հարգանքի զարգացում ,պատասխանատվություն նրա պահպանման և անվտանգության համար: Այցելությունները պատմամշակութա,ինյին վայրեր առավել ճանաչողական են դարձնում հայրենիքին ու հայրեինքի պատմությանը,ինչի արդյունքում սովորողներն իրենց համարում են ավագ սերնդի փառավոր ավանդույթների ժառանգորդներ,ինչն էլ դառնում է հայրենիքի համար մշակվող պայքարի ուժի և ստեղծագործական ներշնչանքի աղբյուր: Իհարկե ցանկացած էքսկուրսիա ,այցելություն,շրջագայություն չպետք է ինքնանպատակ լինեն,այլ պետք է կոնկրետ և հստակ նպատակ պիտի ունենա ,ինչը պիտի նախապես մշակված և քննարկված լինի ուսուցչի,նաև սովորողի կողմից: իկս յուրաքանչյուր էքսկուրսիա

կամ այցելությունից հետո պետք է երեխաների մոտ ցանկություն առաջացնել որպեսզի մտքեր փոխանակեն, քննարկումներ, վերլուծություններ և եզրակացություններ կատարեն: Այսինքն ուսուցիչը մշտապես պետք է որոնի երևույթների,փաստերի և իրադարձությունների մատուցման նոր ձևեր և մեթոդներ,որոնց օգնությամբ իսկապես հնարավոր կլինի ոչ միայն խթանել սովորողների ուշադրությունն ու մտածողությունը,այլև հնարավոր կլինի սովորողներին մղել քննարկումների, որոնք էլ կնպաստեն սովորողների դիտարկումների հիման վրա ժամանակի իրադարձություններն ու երևույթներն իմաստավորել: Այսպիսով պ;ատմության դասավանդման գործընթացում միջոցառումները սովորողների համար հանդիսանում են առարկայի նկատմամբ հետաքրքրություն արթնացնելու կարևոր նախապայման: Միջոցառումները հնարավոր են դարձնում ցանկացած պատմական իրադարձություն,ցանկացած պատմական գործչի գործունեություն բացահայտել առավել գունագեղ և պատկերավոր,ինչն էլ իր հերթին դառնում է երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի ներգործուն միջոց:

ԳԼՈՒԽ 2. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Միջոցառման բովանդակության խորությունն ու բազմազանությունը պայմանավորում է հենց արտադասարանական աշխատանքների ձևերի հարաբերությունն ու համապատասխանությունը: Կան արտադասարանական գործունեության զանազան ձևեր: Այս բազմազանությունը դժվարություն է ստեղծում դրանց դասակարգման մեջ,ուստի միջոցառումների մեկ դասակարգում չի կարող լինել, քանի որ յուրաքանչյուր միջոցառում արտադասարանակն աշխատանքի ցանկացած ձև ինչ-որ չափով նպաստում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերմանն ու ամրապնդմանը,այլև բարոյական,մտավոր,գեղագիտական և բազմաթիվ այլ խնդիրների լուծմանը: Այսինքն ցանկացած միջոցառում անկախ նրանից ,թե որ հանրակրթական առարկայից է այն կազմակերպվում,ունի ընդհանուր նպատակ: Այն է՝ ընդհանուր նպատակին հասնելու համար արտադասարանակն աշխատանքների ընթացքում յուրաքանչյուր մասնակից կատարում է իր դերը,բայց նպաստում է ընդհանուր արդյունքին՝»Միասին» սկզբունքին համաձայն: Այսինքն դպրոցում միջոցառումներ կարող են կազմակերպվել ցանկացած առարկայից ցանկացած դասարանում,սակային յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունից ելնելով՝ կարող ենք տարանջատել միջոցառումների տեսակները: Օրինակ մաթեմատիկա առարկայից այդքան էլ նպատակահարմար չէ կազմակերպել հուշ-ցերեկկույթ կամ էքսկուրսիա: Մինչդեռ գրականությունից,պատմությունից վերոնշյալները դառնում

են միջոցառումների պարտադիր տեսակներ: Հետևաբար յուրաքանչյուր առարկայից կախված կարող ենք տարանջատել միջոցառումների տեսակները: Այս առումով պատմություն առֆարկայի հետ կապված արտադասարանակն աշխատանքները թերևս ամնեաբազմազանն են: Փորձենք թվարկել պատմություն առարկայի շրջանակներում իրականցվող միջոցառումների տեսակները:

Տարելիցներին,նշանավոր իրադարձություններին կամ նշանավոր պատմական գործիչներին նվիված ցերեկույթներ կամ հուշ-միջոցառումներ:Միջոցառումների այս տեսակը այսօր դպրոցներում ամենատարածվածն է: Այն նպաստում է սովորողների գիտելիքների ձեռքբերմանը այս կամ այն նշանավոր

պատմական իրադարձության կամ նշանավոր գործիչների մասին: Նպաստում է սովորողների հռետոր, արտահայտիչ խոսքի ձևավորմանը, ինքնադրսևորմանը, հաղորդակցական հմտությունների զարգացմանը: Ձևավորում է գեղագիտական ճաշակ, բարձրացնում է սովորողների հուզականությունը,ինչի արդյունքում էլ ուսուցիչը ունենում է մի շարք նոր բացահայտումներ աշակերտների կարողությունների և հմտությունների վերաբերյալ: Կարողանում է ուսումնասիրել աշակերտների հետաքրքրությունները,նրանց դիրքը հասակակիցների խմբում,որոնք հնարավոր չէ դասապրոցեսում նկատել: Դպրոցականը ռոմանտիկ է, ցանկանում է որևէ գործունեության մեջ աչքի ընկնել, եթե վերջինս իր համար հետաքրքիր է, ուզում է ներկայացնել իր «ես»-ը: Սակայն ոչ միշտ է, որ կարողանում է լիարժեք ճանաչել իր հնարավորություններն ու ունակությունները, լինել համարձակ իր հասարակության մեջ իրեն կատարյալ դրսևորելու համար: Ուստի, ինչպես նշել է մեծ մանկավարժ Սուխոմլինսկին. «Չի կարելի փոքրիկ մարդու հոգեկան աշխարհը հանգեցնել միայն ուսման: Եթե մենք ձգտենք այն բանին, որ երեխայի հոգու բոլոր ուժերը կլանվեն դասերով, կյանքը նրա համար կդառնա անտանելի: Նա պետք է լինի ոչ միայն դպրոցական, այլև ամենից առաջ մարդ յուր բազմակողմանի հետաքրքրություններով, պահանջմունքներով, ձգտումներով»: Այս առումով, երեխային բացահայտող լավագույն միջոց է դառնում հենց նմանատիպ ցերեկույթները:

Էքսկուրսսիաներ.այցելություններ,շրջագայություններ: Ուսոցման կազմակերպման ձև է, որը թույլ է տալիս կատարել այցելություններ, դիտարկումներ, ինչպես նաև ուսումնասիրել տարբեր պատմամշակութային հուշարձաններ, կոթողներ,տեսարժան վայրեր,երևույթներ և գործընթացներ: Արտադասարանական այս աշխատանքների մասին ես որոշակի խոսեցի նախորդ գլխում, այժմ փորձեմ ավելի մանրամասնել: Ի տարբերություն մյուս առարկաների արտադասարանական աշխատանքներիկ այս տեսակը բնորոշ է հիմնականում ատմություն առարկայի: Դժվար թե գտնվի որևէ մեկը,որը չզբաղվի աշակերտների աշակերտների հետ էքսկուրսիա կազմակերպելով, որը հնարավորություն է տալիս սովորողներին ծանոթանալ հիշարժան իրադարձությունների հետ կապված հուշարձաններին, նշանավոր իրադարձություններին: Էքսկուրսիաների ընթացքում հավաքվում է զգալի քանակությամբ նյութ, որը ուսումնասիրելուց հետո սովորողների մոտ ձևավորվում է հպարտության,պատասխանատվության և հետևաբար դրանք պահպանելու պատասխանատվություն: Օրինակ ինչքան ուզում է » Մայիսյան հերոսամարտեր» թեման պատկերավոր զանազան մեթոդների և հնարների կիրառման դասապրոցեսին լուսաբանել, միևնույնն է սովորողները բոլորովին այլ տպավորություններ են ստանում այդ հերոսական դրվագներից,երբ այդ ամենի մասին խոսում են հենց Սարդարապատի հուշակոթողի տարածքում: Այցելությունները թանգարան նպաստում են ոչ միայն գիտելիքները հարստացնելուն և ամրապնդելուն,այլև սովորողների մոտ ձևավորում է յուրօրինակ ճաշակ,մշակույթ: Այսպիսով, պատմություն առարկայի դասավանդման գործընթացում սովորողների ճանաչողական գիտելիքեների ձեռքբերման գործում առանձնահատուկ տեղ ունեն էքսկուրսիաների և այցելությունների կազմակերպումը,որը առավել նպաստում է հայրենասիրական,մշակութային արժեքների ձևավորմանը և հաջորդ սերունդներին պատասխանատվության փոխանցմանը: Այսինքն պատմության դասերին այս ձևն ամենաարդյունավետն է, քանի որ աշակերտները լավագույնս սովորում են գիտելիքները, երբ նրանց ուղղակիորեն ցույց են տալիս պատմական իրերն ու երևույթները: Էքսկուրսիաները ցանկացած տարիքային խմբում

առաջացնում են մասնակիցների հետաքրքրությունն ու դրական վերաբերմունքը: Պատմություն ուսումնական և զարգացման ծրագրում դրանք նպաստում են դպրոցականների կողմից գիտական, պատմական փաստերի կուտակմանը, տեսողական պատկերներով հարստացնում ուսումնական գործընթացի բովանդակությունը, սովորեցնում են նկատել, առանձին փաստ, դետալ, դետալ, իրենց տեղը տեսնելու կարողություն: փոխազդող երեւույթների ընդհանուր համակարգ, զարգացնել դիտողականությունը, էմպիրիկ մտածողությունը, հիշողությունը: Օրինակ պատմության դասաժամին Գառնիի և Գեղարդի հուշակոթողների մասին ինչքան էլ պատկերավոր,դիդակտիկ միջոցներով հարուստ դաս վարենք ,ամեն դեպքում ավելի արդյունավետ է, երբ աշակերտը այցելում է այդ տեսարժան վայրը , ասել է թե՝ լավ է մեկ անգամ տեսնել,քան հազար անգամ լսել: Այսպիսով, Էքսկուրսիաները դաստիարակում են հետաքրքրասիրություն, ուշադրություն, ինչպես նաև մշակութային, բարոյական և գեղագիտական վերաբերմունք իրականությանը և հայրենասիրություն:

Օլիմպիադաներ, մրցույթներ, բանավեճեր

Աշակերտների կրթական և ճանաչողական գործունեությունը խթանելու և նրանց ստեղծագործական մրցունակությունը զարգացնելու համար պատմական թեմաներով, ինչպես նաև մրցույթներ են անցկացվում դպրոցներում: Արտադասարանական գործունեության այս ձևերը նախապես ծրագրված են, դրանց մասնակցելու համար ընտրվում են աշակերտները, ինչը մեծ խթան է հաղորդում նրանց կարողությունների և գիտելիքների տարբեր ոլորտներում դրսևորմանը : Միևնույն ժամանակ նրանք հնարավորություն են տալիս դատել ուսուցիչների աշխատանքի ստեղծագործական բնույթի, տաղանդներ փնտրելու և զարգացնելու նրանց կարողության մասին:

Արտադասարանական միջոցառումներում լայնորեն պետք է օգտագործվեն զանգվածային աշխատանքի այնպիսի ձևեր, ինչպիսիք են մրցույթները, օլիմպիադաները և ստուգատեսները: Նրանք խթանում են սովորողների ակտիվությունը, ուժեղացնում թիմային աշխատանքը,զարգացնում

նախաձեռնողականությունը, ուժեղացնում թիմային աշխատանքը: Նմանատիպ աշխատանքները մեծ հնարավորություններ են պարունակում սովորողներին ակտիվացնելու համար, թեև դրա աստիճանը կարող է տարբեր լինել: Բավականին արդյունավետ են պատմություն առարկայի հետ կապված կազմակերպվող վիկտորինաները: Այսինքն նմանատիպ մրցույթները, օլիմպիադան, խաղը պահանջում են բոլորի անմիջական ակտիվությունը:Հաշվի առնելով արտադասարանական աշխատանքի էությունը նրա հնարավորությունների, նպատակների, բովանդակության, ձևերի և միջոցների միջոցով՝ մենք կարող ենք որոշել դրա առանձնահատկությունները: Դրանք խթանում են ոչ միայն սովորողների՝ նոր գիտելիքքների ձեռքբերմանն ու ամրապնդմանը,այլև ստեղծում են առողջ մրցակցային պայմաններ, հաղթելու և պարտվելու նկատմամբ ճիշտ դրսևորումներ:

Հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ

Ապրելով այնպիսի ժամանակաշրջանում,երբ վտանգված են հայրենիքի սահմանները, և դիմակայում ենք գոյապայքարի մարտահրավերներին, անհրաժեշտ է պարբերաբար հանդիպումներ կազմակերպել ռազմական գործողությունների ընթացքում անմիջական մասնակցություն ունեցած հերոսների, զինվորական գործիչների հետ: Նման հանդիպումները կնպաստեն ինչպես հայրենասիրական բարձր ոգի դաստիարակելուն ,այնպես էլ անմիջական շփմանը: Արդյունքում սովորողները կճանաչեն իրենց ժամանակի գործիչնեչին,կծանոթանան ու կկարողանան վերլուծել վերջիններիս գործունեությունը: Միևնույն ժամանակ կսովորեն շփումների կանոններին, միմյանց լսելու, միմյանց հարցեր հղելու կուլտուրան:

ԳԼՈՒԽ 3. Միջոցառումների դերն ու նշանակությունը պատմության դասավանդման գործընթացում

Պատմություն առարկան իր ծրագրային բովանդակությամբ տարբերվում է մյուս առարկաներից այնքանով, որ առավել նպատակաուղղված է անհատի և քաղաքացու ձևավորման և կայացման առաջնահերթություններին և նպաստում է ազգային արժեքների ձևավորմանը: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Եվ , անշուշտ, այս մեծագույն արժեքի ձևավորմանը նպաստող արդյունավետ մեթեդն ու միջոցը արտադասարանական գործունեության կազմակերպումն է: Նախորդ գլուխներում ես առավել անդրադարձա միջոցառումների ուսուցողական կարևորությանը: Այժմ ցանկանում եմ առավել անդրադառնալ սոցիալական մի շարք հմտությունների ձևավորման կարևորությանը, որոնք սովորողները ձեռք են բերում միջոցառումների արդյունքում:Դասապրոցեսի հետ համեմատած միջոցառումների ժամանակ խիստ կանոնակարգերի բացակայությունը. ուսուցչին շատ ավելի մեծ ազատություն է ընձեռում արտադասարանական աշխատանքի բովանդակության, ձևերի, միջոցների, մեթոդների ընտրության հարցում: Սա մի կողմից

հնարավորություն է տալիս գործել սեփական հայացքներին ու համոզմունքներին համապատասխան: Մյուս կողմից, մեծանում է ուսուցչի անձնական պատասխանատվությունը կատարված ընտրության համար: Սա նշանակում է , որ միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը չպետք է ինքնանպատակ լինի: Միջոցառման ցանկացած տեսակ պետք է ունենա կոնկրետ նպատակ, կոնկրետ գործողություններ, որոնք պիտի իսկապես նպաստեն աշակերտների ոչ միայն գիտելիքների ձեռքբերմանը, արժեհամակարգի ձևավորմանը, այլև մի շարք հմտությունների ու կարողությունների ձևավորմանը: Պլանավորման գործընթացը մեծ հնարավորություններ է պարունակում դպրոցի թիմը համախմբելու և աշակերտներին օգտակար հմտություններ և կարողություններ կրթելու համար: Ուստի անհրաժեշտ է բացահայտել և հաշվի առնել նաև սովորողների խնդրանքներն ու ցանկությունները,Այսպիսով, արտադասարանական աշխատանքը ուսումնական և կրթական գործունեություն է, որն իրականացվում է դասասենյակից դուրս: Այն խթանում է պատմության դասերին ճանաչողական գործունեությունը, ձևավորում սովորողների ճաշակը, աշխարհայացքը, ընդլայնում նրանց մտահորիզոնը:Մեկ միջոցառման կազմակերպումը կարող է մի շարք հմտություններ զարգացնել՝ թիմային աշխատանք, գրավոր և բանավոր խոսքի կառուցում, ստեղծարարություն, աշխատանքի պլանավորում, ժամանակի կառավարում: Իհարկե շատ հաճախ, երբ միջոցառման կազմակերպման զգալի մասն իրականցնում է ուսուցիչը, աշակերտներին մնում է սպառողի գործը՝ խաղալ իրենց դերը: Այս դեպքում միջոցառումը չի ծառայի իր նպատակին: Իրականում ուսուցչի դերը պետք է լինի ոչ թե միջոցառում կազմակերպելը, այլ սովորողներին մոտիվացնելը, ուղղորդելն ու խրախուսելը: Այդ միջոցառումը նախ և առաջ աշակերտներին է պետք, հետևաբար, հիմնական գործը պետք է հենց նրանք անեն: Միջոցառումը հիանալի հնարավորություն է փորձելու և սովորելու, միմյանց ճանաչելու և համագործակցելու: Դպրոցական միջոցառումը կարող է սահուն չընթանալ, այնտեղ կարող են լինել տասնյակ սխալներ: Այս դեպքում կարևոր է, որ աշակերտներն ունենան փորձի և սխալվելու միջավայր:

Դպրոցականը ռոմանտիկ է, ցանկանում է որևէ գործունեության մեջ աչքի ընկնել, եթե վերջինս իր համար հետաքրքիր է, ուզում է ներկայացնել իր «ես»-ը: Սակայն

ոչ միշտ է, որ կարողանում է լիարժեք ճանաչել իր հնարավորություններն ու ունակությունները, լինել համարձակ՝ հասարակության մեջ իրեն կատարյալ դրսևորելու համար: Ուստի, ինչպես նշել է մեծ մանկավարժ Սուխոմլինսկին. «Չի կարելի փոքրիկ մարդու հոգեկան աշխարհը հանգեցնել միայն ուսման: Եթե մենք ձգտենք այն բանին, որ երեխայի հոգու բոլոր ուժերը կլանվեն դասերով, կյանքը նրա համար կդառնա անտանելի: Նա պետք է լինի ոչ միայն դպրոցական, այլև ամենից առաջ մարդ յուր բազմակողմանի հետաքրքրություններով, պահանջմունքներով, ձգտումներով» : Անշուշտ մեծ է միջոցառումների դերը, որոնք կարող են սեր և ձգտում առաջացնել դեպի ուսումնական գործընթացը: Աշակերտն այդ միջոցառումներից պետք է բավարարված և ինքնագոհ լինի, այն է՝ միջոցառումը պետք է համապատասխանի աշակերտի զգացմունքներին, ապրումներին: Միջոցառումները դառնան դպրոցականի բազմակողմանի զարգացման ու դաստիարակության միջոց, աշակերտը լինի միջոցառման առաջատարն ու պատասխանատուն: Որպեսզի աշակերտն ապագայում իրեն զգա պետության քաղաքացի, դեռ դպրոցական տարիներից նրա մեջ պետք է ձևավորել ինքնուրույնություն և նախաձեռնելու կարողություն, որոնց կնպաստեն նաև արտադասարանական բազմաբնույթ միջոցառումները: Իսկ վերջիններս, ինչպես նշեցի, առավել կձևավորվեն հատկապես պատմություն առարկայի արտադասարանական միջոցառումների ժամանակ: Անհրաժեշտ է համապատասխան միջավայր ստեղծել աշակերտների հետաքրքրությունների ձևավորման և ինքնադրսևորման համար: Արտադասարանական միջոցառումները այն կարևոր ազդակներն են, որոնք նպաստում են աշակերտների ազատ, անկաշկանդ կամարտահայտմանը: Ուստի տվյալ առարկան դասավանդող ուսուցչի և դասղեկի նպատակը պետք է լինի նաև արտադասարանական միջոցառումներին աշակերտներին նպատակամղել ստեղծագործական գործունեության: Վերջիններս պետք է նպաստեն աշակերտների ինքնադրսևորմանն ու ինքնահիրացմանը, հասարակությանը ինտեգրմանը: Աշակերտների համար արտադասարանական միջոցառումները լինելու են ցանկալի և սպասված:Միջոցառումների արդյունավետության համար կարևոր հանգամանք է նաև հատկապես ավագ դասարանների սովորողների

մասնակցության և ընդգրկվածությանը հարցը: Այս նպատակով ուզում եմ արձանագրել ավագ դասարաններում սովորող մի քանի աշակերտների հետ ունեցած հարցազրույցների արդյունքները: XI դասարանի աշակերտ Ա. Բ.-ն արտահայտում է հետևյալ միտքը. «Անշուշտ մեծ է ավագ դպրոցում միջոցառումների դերը աշակերտների ինքնուրույնության ձևավորման հարցում: Մասնակցելով միջոցառումներին՝ զարգանում է աշակերտի աշխարհայացքը, բանավոր խոսքը, իսկ ինքնուրույնության ձևավորմանը նպաստում է այն փաստը, որ ավագ դպրոցի աշակերտը ցանկանում է ինքը դառնալ միջոցառման կազմակերպիչ կամ օգնական»: Մեջբերեմ նույն դասարանի աշակերտուհի Մ. Ղ.-ի կարծիքը «Աշակերտների ինքնուրույնության դրսևորման մեջ մեծ նշանակություն ունեն դասերից դուրս կազմակերպվող միջոցառումները: Վերջիններիս թեմաները կարող են տարբեր լինել, և աշակերտը յուրաքանչյուր միջոցառման ժամանակ անհատապես և յուրովի կարող է ներկայանալ: Այդ ժամանակ ուսուցիչը կարող է նկատել աշակերտի մեջ կազմակերպչական այն հատկանիշներն ու որակները, որոնք դասապրոցեսի ժամանակ չեն բացահայտվում: Նպատակահարմար է, որ միջոցառումների թեմաներն աշակերտները ընտրեն ուսուցիչների հետ փոխհամաձայնեցված, որպեսզի հետաքրքրություն դրսևորեն միջոցառման նկատմամբ»:

Բնականաբար, արտադասարանական բազմաբնույթ միջոցառումները, որոնց նախաձեռնողները և կազմակերպիչները կլինեն աշակերտները, իսկ ուսուցիչները ընդամենը խորհրդատուի կարգավիճակ կստանձնեն և սովորողների մեջ կձևավորեն ինքնիրացման ու ինքնադրսևորման առավելագույն ջանքեր գործադրելու գործընթաց և պատասխանատվության զգացում: Աշակերտներից յուրաքանչյուրն առավելագույն հնարավորություններով իրեն կդրսևորի, որովհետև պատասխանատու կլինի ամեն մի թերության կամ ոչ լիարժեքության համար, որի արդյունքում կձևավորվի թիմ, որ միահամուռ ուժերով պատասխանատու կլինի ստանձնած, նախաձեռնած միջոցառման համար Աշակերտները պասսիվ կարգավիճակից կդառնան ակտիվ նախաձեռնողներ և ամեն մեկը իր հնարավորությունների և ունակությունների սահմաններում կդրսևորի իր անձնային դրական որակները, այն է՝ լիարժեք ինքնիրացում կլինի:

Ուսուցիչը հանդես կգա օգնողի, որպես հավասարը հավասարի, այլ ոչ թե թելադրողի ու հրամաններ արձակողի կարգավիճակում: Արդյունքում՝ նախաձեռնողն ու իրականացնողները աշակերտները կլինեն, որն էլ կնպաստի վերջինների մեջ հետաքրքրություն ու սեր ձևավորելուն դեպի միջոցառումը: Ցանկացած միջոցառում ունի նպատակ, խնդիրներ, ընթացք և ավարտ: Որքանով են այս պահանջները պահպանվում միջոցառման ժամանակ:

Միջոցառումների արդյունավետությունը կախված է նար այն հանգամանքից, թե որքանով է այդ միջոցառման թեմատիկան բխում աշակերտների հոգուց, ինչ նպատակներ են իրականացնում նման միջոցառման ժամանակ, ինչ սովորեցին ու ինչ վերհիշեցին աշակերտները՝ ելնելով միջոցառման խորագրից: Ցանկացած զարգացած հասարակության պահանջն է ոչ միայն հարուստ գիտելիքներով օժտված սերունդ ունենալ, այլ նաև դաստիարակված: Իսկ ըստ Ա. Մանուկյանի՝ «դաստիարակությունը ամենատարբեր աղբյուրներից մարդուն ուղղված ներգործություններից առաջացրած նրա մտածական և պրակտիկ գործունեության շնորհիվ նրանում կայացող բազմաբնույթ փոփոխությունների գործընթացն է» [2,110]: Իսկ որքանով ենք մենք նպաստում, որ արտադասարանական միջոցառումների միջոցով աշակերտների մտածական և պրակտիկ գործունեությունը զարգանա, եթե վերջինս ընդամենը կատարողի կարգավիճակում է: Այստեղ ևս ուզում եմ ներկայացնել ավագ դասարանների աշակերտների տեսակետները, որոնք արտահայտում են աշակերտների վերաբերմունքը արտադասարանական միջոցառումների վերաբերյալ, ինչպիսի միջոցառումներ կցանկանային կազմակերպել կամ դիտել, ինչ դեր են կատարում միջոցառումները աշակերտների կյանքում: Ե՛վ ավագ, և՛ հիմնական դպրոցների աշակերտները կարևորել են միջոցառումների դերը: Սակայն ավագ դպրոցի աշակերտներն արտադասարանական միջոցառումների մասին ինչ-որ չափով վերապահումով են խոսում՝ պատճառաբանելով ժամանակի սղությունը (պատրաստվում են ավարտական քննությունների): Ահա, թե ինչ է գրել ավագ դպրոցի տասնմեկերորդ դասարանի աշակերտուհի Գ.Մ.-ն. «Իհարկե միջոցառումներն օգնում են աշակերտներին լինել ինքնուրույն, ինքնավստահ, եթե միջոցառման թեման ընտրվում, պլանավորվում և կազմակերպվում է

ուսուցիչ-աշակերտ փոխհամաձայնությամբ: Աշակերտին հասանելի է լինում տվյալ միջոցառման նպատակը, և իր անելիքը: Այդ դեպքում աշակերտը հաճույք կստանա տվյալ միջոցառմանը մասնակցելով, կոգևորվի և իր հնարավորությունների սահմաններում կփորձի ինքնադրսևորվել»: Ներկայացնենք տասներորդ դասարանի աշակերտ Գ. Ղ.-ի մտորումները արտադասարանական միջոցառման մասին. «Տարբեր տեսակի միջոցառումները, էքսկուրսիաները, անշուշտ, մտերմացնում են երեխաներին և ծառայում են որպես երկար սպասված հանգիստ: Սակայն ես նկատել եմ նաև ոչ հաճելի մի փաստ. այն երեխաները, ովքեր ֆիզիկական արատ ունեն, չեն մասնակցում կամ մասնակից չեն դարձնում միջոցառումներին, նրանք մնում են պասիվ կարգավիճակում: Տարբեր տեսակի միջոցառումները չափազանց կարևոր են, որովհետև վերջիններիս միջոցով ուսուցիչները կարողանում են ի հայտ բերել երեխաների թաքնված ունակությունները, իրականացնել աշակերտների միջոցով ներդպրոցական մրցույթներ, որպեսզի սովորելու մոտիվացիա լինի: Դպրոցը, բացի կրթելուց և դաստիարակելուց, պետք է միջոցառումների միջոցով մեզ ներգրավի դպրոցական կյանք»: Կարծես այս շարադրանքը մեզ՝ մանկավարժներիս, սթափեցնող կոչ է, որպեսզի հաշվի առնենք աշակերտների նպատակներն ու ցանկությունները, միջոցառումներ կազմակերպելու ժամանակ, նրանց դիտարկենք իբրև ձևավորված անձ և հնարավորություն տանք ինքնադրսևորվելու որպես գործընկեր ու հարգենք վերջիններիս «ես»-ը, այլապես, կստացվի մի իրավիճակ, որի մասին մտորում են շատ աշակերտներ, բայց չեն արտահայտվում: 8-րդ դասարանի աշակերտուհի Ն. Գ.-ն գրել է. «Իմ կարծիքով միջոցառումները անիմաստ բաներ են, որովհետև դպրոցներում հիմնականում կազմակերպվում են դասղեկների կամ ուսուցիչների միջոցով, և հիմնականում մասնակիցները ընտրվում են լավ սովորող աշակերտներից: Անտեսվում են թույլ կամ միջակ սովորող աշակերտները: Միջոցառման ժամանակ չէ՞ որ բոլորն են հավասար: Մի՞թե համեմատաբար թույլ սովորող աշակերտը չի կարող լավ երգել, պարել կամ արտասանել»: Իհարկե տեղին է աշակերտուհու մտահոգությունը, որովհետև միջոցառումների շնորհիվ շատ ուսուցիչներ փորձում են նկատելի դարձնել այսպես կոչված իրենց սիրելի աշակերտներին՝ հաշվի չառնելով նրանց կազմակերպչական շնորհքները: Ինչպես

ընդունված է, իրենք կազմում են միջոցառման պլանը, և իրենք էլ ընտրում աշակերտներին: Արդյունքում՝ մեծ թվով աշակերտներ կամ չեն ցանկանում մասնակցել միջոցառմանը կամ էլ հիասթափված ու անտարբեր հեռանում են նման միջոցառումներից: Վերը նշվածիս հավաստիացումն է 12-րդ դասարանի աշակերտուհի Ա. Վ.-ի մտորումները. «Իմ կարծիքով, միջոցառումները ներդպրոցական կյանքում մեծ դեր ունեն: Միջոցառումների շնորհիվ յուրաքանչյուր աշակերտ ձևավորվում է որպես անհատ, դառնում է ավելի ինքնուրույն, պատասխանատու և կազմակերպված: Միջոցառումների շնորհիվ աշակերտները կտրվում են իրենց համակարգիչներից և բջջայիններից, աշակերտների միջև ստեղծվում է ջերմ հարաբերություններ, դառնում են ինքնավստահ և հարկ եղած պահին կարողանում են ինքնադրսևորվել»:

Այսպիսով՝ պարզվեց, որ հաճախակի կատարվող արտադասարանական միջոցառումներն շատ են օգնում աշակերտներին ինքնաարտահայտման, ինքնադրսևորման հարցերում, եթե վերջիններս անմիջապես մասնակցում են տվյալ միջոցառման և՛ թեմատիկայի ընտրությանը, և՛ միջոցառման անցկացմանը, իսկ ուսուցիչները ընդամենը ուղղորդում են նրանց և արդյունքում ավելի լիարժեք են ճանաչում իրենց սաներին: Քանի որ մանկավարժական գործընթացի կարևոր բաղադրամաս են կազմում նաև արտադասարանական բազմաբնույթ միջոցառումները , որոնց իրականացնողները պետք է աշակերտները լինեն, ուստի ժամանակահունչ և հրատապ է առաջնորդվել վերջիններիս պահանջներով, այն է նրանց միջոցով ու օգնությամբ կազմակերպենք բազմաբնույթ ռազմահայրենասիրական թեմաներով միջոցառումներ՝ հնարավորություն ստեղծելով, որ զարգանա աշակերտների ինքնուրույնությունը, որոնց շնորհիվ կլուծվի նաև ինքնիրացման խնդիրը, Պատմություն առարկայից կազմակերպվող միջոցառումները նպատակն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու

ուսուցումը, հայրենի երկրի հերոսական անցյալի ճանաչումն ու գնահատումը: Հայոց պատմության մեջ արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարները, պայքարելու անկոտրուն կամքն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի պատմության մեջ է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը, հայ ժողովրդի հերոսական պայքարն: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել մեր գալիք սերունդներին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունննու բարոյահոգեբանական արժանիքներ: Իսկ ուսումնական գործընթացը աշակերտների համար կդառնա ավելի բովանդակալից ու հետաքրքիր: Ահա այս բազմաբովանդակ և ահհրաժեշտ կարողությունների , հմտությունների և արժեքների ձևավորման գործում առանձնապես մեծ դեր են խաղում ճիշտ կազմակերված միջոցառումները: Պատմություն առարկայի դասավանդումն առավել արդյունավետ դարձնելու համար ուսուցիչները պետք է սովորողներին զինեն ոչ միայն հին,միջնադարի,նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելով պետք է անցնի ազատության,անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքներին մեծապես կնպաստեն պատմություն առարկայից կազմակերպված ռազմահայրենասիրական, դիտողական, ճանաչողական բնույթի տարատեսակ միջոցառումները, որոնք հնարավորություն կտան սովորողներին հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Միայն այս կերպ կարելի է հանել պատմություն առարկայի խոր իմացությանը , ինչն էլ առավել կնպաստի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու

մայր հողին,տեր կանգնելու հայրենիքին: Այսպիսով, պատմության դասավանդման գործընթացում միջոցառումների կազմակերպումը հնարավորություն կտա՝ ● ավելի ցայտուն արտահայտել ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները

●գաղափար կազմել հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների , առանձնահատկությունների մասին:
●ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների և համամարդկային նվաճումների հետ, հայրենի երկրի մշակույթին, պատմամշակութային կոթողների հետ
● պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, որոնք սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին
● բացահայտել պատմամշակութային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը, հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:
●բացահայտել պատմական ճշմարտությունը,նշել,որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից
●դաստիրակել խորը հայրենասիրություն ,ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում է
●Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակութային այն միջավայրը,որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:
●հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման , հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին

●նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:
●ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ
●զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստողծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները. խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը,մտածողության ինքնուրույնությունը,սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները
●սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու , ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվոլու,անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու,վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի թեմայի ընտրությունն առաջին հերթին կապված է թեմայի արդիականության հետ: Ասօր դպրոցներում ինչ-որ տեղ գերագնահատվում է ուսումնական գործընթացը՝ ետին պլան մղելով արտադասարանական միջոցառումները: Այս աշխատանքի ընթացքում փորձեցի վերհանել պատմության դասավանդման գործընթացում զանազան արտադպրոցական միջոցառումների (ցերեկույթներ, միջդասարանային միջոցառումներ տարբեր առարկաների կամ թեմաների իմացության շուրջ, էքսկուրսիաներ, այց պատկերասրահ, թանգարաններ, հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ): դերն ունշանակությունը: Միաժամանակ փորձեցի վերհանել այն բոլոր բացերն ու բացթողումները, որ ունենք այսքան կարևոր գործունեության համար:Սովորաբար տարրական դասարանի աշակերտներտն ուսուցչի կազմած պլանով և ընտրված նյութերով մասնակցում են արտադասարանական միջոցառմանը (նոր տարվա, այբբենարանի հանդեսներ և այլն) մեխանիկորեն վերարտադրելով իրենց հանձնարարված նյութը՝ միապաղաղ ու լարված, միջին և ավագ դասարանի աշակերտները քիչ են մասնակցում միջոցառումներին, որովհետև որպես միջոցառման կազմակերպիչներ և անցկացնողներ անտեսվում է աշակերտների դերը: Հիմնականում առաջնորդվում են ուսուցիչների կամ կազմակերպիչների հանձնարարականներով: Լավագույն դեպքում էքսկուրսիայի անվան ներքո կազմակերպում են ընդամենը խնջույքներ բնության գրկում: Նման պասիվությունն աշակերտների մեջ մեռցնում է հետաքրքրասիրությունը ցանկացած միջոցառման կազմակերպման ու իրականացման ուղղությամբ: Տեղին է մեջբերել Լեոնարդո դա Վինչիի խոսքը, թե երկաթը ժանգոտում է իր համար կիրառություն չգտնելով, լճացած ջուրը նեխում կամ ցրտից սառչում, իսկ մարդու միտքը խամրում է՝ կիրառություն չգտնելով: Հետևաբար, ինչպես նշել է

Մակարենկոն «Դաստիարակը պետք է ունենա սանի առողջության պատկերը, միշտ իմանա, թե ինչ ուղղությամբ է շարժվում նրա բնավորությունը, ի՞նչ հետաքրքրություններ ու հակումներ, տաղանդներ և ընդունակություններ ունի նա և ո՞րն է անհրաժեշտ զարգացնել»[4,118]: Ուստի միջոցառումների ժամանակ պետք է առաջատարները և կազմակերպիչներն՝ աշակերտները լինեն ու պատասխանատու զգան համապատասխան աշխատանքը նպատակամետ, անթերի կատարելու համար: Ցավոք սրտի, մեր օրերում ցանկացած միջոցառման նախաձեռնողը, պլանավորողը հիմնականում դասվարը կամ դասղեկն է լինում, կամ էլ որևէ առարկայի ուսուցիչը, : Աշակերտները հանդես են գալիս կրավորական կարգավիճակում՝ որպես մեխանիկական կատարողներ՝ ըստ հանձնարարված դերերի: Նման դեպքերում աշակերտները շատ հաճախ հրաժարվում են միջոցառմանը մասնակցել: Մինչդեռ ուսուցիչներն աշակերտների նման վերաբերմունքը մեկնաբանում ենսովորողների պասիվությամբ՝ չխորանալով հարցի ցավոտ ու կարևոր էության մեջ: Ներկայացնողը՝ պատասխանատու անձը, աշակերտը, անտեսված է, չի հարգվել վերջինիս եսը, ցանկությունները: Մինչդեռ աշակերտներին հանձնարարելով որպես միջոցառման կազմակերպման ու իրականացման պատասխանատուներ, նրանց մեջ պետք է բորբոքել հետաքրքրության ու սիրո կրակը միջոցառումը որակյալ ու բովանդակային կազմակերպելու համար: Այս պարագայում միայն արտադասարանական գործունեությունը կնպաստի դպրոցականների ճանաչողական գործունեության բարձրացմանը, նրանց գիտելիքների խորացմանը, մտահորիզոնի ընդլայնմանն ու քաղաքացիական դիրքի ձևավորմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հանրակրթության պետական չափորոշիչ

2. Մանուկյան Ս. Պ. , Ընդհանուր մանկավարժագիտություն, «Զանգակ-97», Ե., 2005,

3. Մանուկյան Մ. Մ., Արտադասարանական դաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները, Ե., «Լույս», 1980

4. Սուխոմլինսկի Վ. Ա., Դաստիարակության մասին, Ե., «Լույս»,1976

5. А. С. Макаренко, Сочинения, в 7 том, т 3, 1958